

ԻՆՉՈՒՒՄ ԿՅՍ ՓՈԹՈՐԻԿԸ

Աշխարհի այս խուլ անկեան մեջ, ուր մարդիկ վարժ են շուտ մոռնալու իրենց խոստումներն ու յանձնառությունները, ուր մարդիկ մասնագիտացած են շուտ իրենց կեցուածքներէն շրջադարձ կատարելու արհեստագիտութեամբ, կ'ուզենք վերաբարձի կարգով յիշեցնել, թէ երկար ու ցուալի բանավեճերէ ետք, լիբանանցիները՝ իրենց հետ ունեւալով արաբական աշխարհը՝ Լիբանանի գոյութիւնը պահպանելու նպատակաւ համայն աշխարհէն պահանջեցին միջազգային ատենակի մը կազմութիւնը: Ընչո՞ւ է, նաեւ, որ լիբանանեան որոշ հատուածներ, ատենակի կազմութենէն շատ աւելի վաղ՝ ամբաստանութիւններու թիրախ դարձուցին միջազգային դատական ատենանը (տակաւին անգոյ), առարկելով, թէ ատենանը քաղաքական նպատակներ պիտի հետապնդէր, իրաւական խորք պիտի չունենար, քաղաքական ցուցմունքներու ազդեցութեան տակ պիտի գործէր: Խորհրդարանը փակելէ, մայրաքաղաքին առետարական կեդրոնատեղիներուն առջեւ վրանային ճամբարներ հաստատելէ, կառավարական կառոյցները անդամայնուծելէ, Մայիս 7-ի տխրալուծէ դէպքերէն ետք, այսօր՝ չորս սպաները ազատ արձակելու վճիռին լոյսին տակ, ընդդիմութիւնը իր թիրախը դարձուցած է Լիբանանի իրաւական կառոյցները եւ ի՞նչ, յանկարծ կը պարզուի, որ միջազգային դատական ատենանը ապաքաղաքական խորք ունի եղեր...:

Լիբանանի իրաւապահ մարմիններու վրայ գործուած անարդարանալի այս յարձակումը եւ միջազգային ատենանի որոշումը պաշտպանելու ցուալի հակասութիւնը լուրջ հարցականներ կըդրուէ այս ստեղծել, եթէ ոչ՝ ստեղծած է արդէն: Փաստօրէն, կա՞իջ Յարիրիի սպանութեան անմիջապէս յաջորդող հանգրուանին, միջազգային դատարանին կազմութիւնը մերժող հոսանքները, որոնք օրին լիբանանեան ատենանի մը կազմութեան հաւանութիւնը կու տային, այսօր չորս սպաներուն ազատ արձակումին լոյսին տակ, իրենց քարոզչական հրետանին դարձուցած են Լիբանանի իրաւապահական կառոյցներուն ուղղութեամբ: Անբացատրելի է այս երեւոյթը: Մէկ կողմէ՝ ուրախութեամբ կը դիմաւորեն ատենանի որոշումը, միւս կողմէ՝ կասկածանք կ'արտայայտեն միեւնոյն կառոյցին շուրջ: Այս մէկը մտահոգութեան մը ապացոյց է:

Ինչո՞ւ քարոզչական այս անվայել ու վիրաւորական արշաւը Լիբանանի իրաւապահական կառոյցներուն դէմ: Պատճառը պարզ է: Երկրորդ համաշխարհային պատերազմի ամենաբուռն օրերուն, երբ գերմանական ռումբերը Բրիտանիոյ վրայ կը տեղադրուէին, Լոնտոնն ու անկախական քաղաքները սարսափի տակ կը պահէին, կառավարութեան անդամներէն մէկը, օրուան վարչապետ Չըրչիլին, հարցում մը կ'ուղղէր, թէ Բրիտանիա ինչպէ՞ս պիտի տոկար Յիթլերի օդարձակներուն առջեւ, Չըրչիլ ժպտալով կը պատասխանէ. «Մի վախճաք պետութեան վրայ, այնքան ժամանակ որ իրաւապահական կառոյցները անկաշկանդ կը գործեն, իսկ քանդուածը շուտով կրկնապէս վերակառուցել...»:

Ընդդիմութեան քարոզչական արշաւը Լիբանանի իրաւապահական կառոյցներուն վրայ սերտուած է յատուկէն ծրագրաւորուած, պետականութիւնը քայքայելու միտող քաղաքականութեան մը հերթական հանգրուան է, բայց ոչ՝ պատահականութեան: Քայքայել ու կազմալուծել իրաւապահ կառոյցները, անիշխանականութիւն ու անկառավարելիութիւն ստեղծելու նպատակաւ:

Ընդդիմութիւնը կը մոռնայ, որ իր օրին լիբանանեան դատարանը պարզապէս գործադրեց միջազգային ատենանի որոշումը, ինչպէս վերջերս դարձեալ հետեւելով անոնց վճիռին՝ ազատ արձակեց արգելափակուած սպաները:

Քաղաքական անձնաւորութիւններու եւ իրաւապահական մարմիններու հասցէին ընդդիմութեան ծաւալած աժան քարոզչութեան առ ի պատասխան, Մուսթաքալա Յոսանք խորհրդարանական խմբակուումի նախագահը՝ Սաատ Յարիրիի անգամ մը եւս ապացուցեց լիբանանեան տարողութեամբ եւ ոչ՝ համայնքային արժանիքներով օժտուած ղեկավարի մը յատկանիշները, երբ ամենայն հանդարտութեամբ եւ առարկայական դատողութեամբ, լատտեղական բոլոր արդիւններուն առջեւ յայտնուելով վերահաստատեց միջազգային ատենանի որոշումները (վճիռները) ընդունելու իր պատրաստակամութիւնը:

Չորս սպաները ազատ արձակելու վճիռը, ատենանի ապաքաղաքական կառոյց մը ըլլալու ամենավառ ապացոյցն էր: Իսկ ապաքաղաքական ատենան կը նշանակէ ոճրագործները ուր որ ալ գտնուին անոնք՝ փախուստ պիտի չտան արդարութենէն:

Չորս սպաները ազատ արձակելու առիթով, կազմակերպուած փառատօներուն, հանդիմութիւններուն ընթացքին, հանդիսավարներուն, բանխոսներուն ու հրապարտողներուն կատարողութեան արդիւնքն էր: Ի՞նչ պիտի ըլլայ անոնց դիրքը, երբ միջազգային դատական ատենանը իր հարցաքննութիւնները շարունակելու նպատակաւ ձեռքարկութեան տրոջ վճիռներ արձակէ, ի մասնաւորին՝ Մարտ 8-ի գորակոցին կարգ մը անձնաւորութիւններու դէմ: Ընդդիմութիւնը պիտի շարունակէ՝ արդէն իր բարի վկայութիւնները միջազգային դատական ատենանի հասցէին: Այս որոս բնութեամբ են, ընդդիմութեան ընտրական դիրքերը, որ չորս սպաները ազատ արձակելու վճիռը ամենաուստացուցիչ, անպատշաճ ու գռեհիկ ռոճով կ'օգտագործուի ընտրական քարոզարշաւէն ներս:

Երեսուներկու օրեր լիբանանցիները կը բաժնեն խորհրդարանական ընտրութիւններէն: Ընտրութիւններ, որոնք յառաջիկայ տասնամեակներուն Լիբանանի կրելիք դիմագիծին անկիւնաքար կ'ընդունեն ու դառնալ:

Մենք անհրաժեշտութիւնը չունինք վկայակոչելու ընտրութիւնները ընդդիմութեան յաղթանակով արարտելու պարագային Լիբանանի սպանացող վտանգները: Մեզի կը մտահոգէ ու միաժամանակ կը հետաքրքրէ, մեր փափաքած Լիբանանը, իբրեւ՝ ազատ, գերիշխան պետականութիւն: Լիբանան մը՝ ուր համակեցութիւնն ու խաղաղ գոյակցութիւնն է պետականութեան նշանաբանը: Լիբանան մը, որ նախանձնախնդիր է իր գաւակներուն ապագայով, որպէսզի անոնք չհեռանան հայրենի հողէն, աշխատանքի բարգաւաճ պետականութեան ի խնդիր: Լիբանան մը, ուր սահմանադրական բոլոր կառոյցները կը գործեն անկաշկանդ, իրաւականօրէն իրենց սահմանուած շրջագիծին մէջ, ուր բանակն ու ներքին ապահովութեան ուժերն են քաղաքացիներուն պաշտպանութեան երաշխիքը, ներքին ու արտաքին ամեն տեսակի հակառակորդներու, օրինազանցներու դէմ: Լիբանան մը, ուր միայն պետութիւնն է արտաքին յարաբերութիւններուն որոշումի աղբիւրն ու պատասխանատուն: Մենք այս համոզումներով պիտի մասնակցինք խորհրդարանի յառաջիկայ ընտրութիւններուն, որուն համար ամբողջական յանձնառութեամբ պիտի քուէարկենք Մարտ 14-ի ուժերը ներկայացնող ընտրացանկերուն:

ԱՅՐԱՆ ԾԻՐՏԵՍԵԱՆ

ՀԱՏՈՒՄՆԵՐ՝ ՄԱՅԻՄ 1-Ի ԱՌԻԹՈՎ, ՆՈՐԱՆԿԱՆ ՀԱՅԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՒՈՆ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԵԼՈՅԹԷՆ

Ծ.Խ. Ստորեւ հատուածներ՝ Մայիս 1-ի առիթով, նորանկախ Հայաստանի Հանրապետութեան առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի ելոյթէն, որ կ'ընդգրկէ հայ-թուրք փոխ յարաբերութիւններուն մասին, Հայ Ազգային Գոնկրէսին պատկերացումը:

«Ա.»

Հայ-թուրքական յարաբերութիւններում վերջերս նկատուող անմախաղէ տեղաշարժը արժանի է յատուկ գնահատականի, որովհետեւ այն շօշափում է հայոց պետականութեան զարգացման ամենակենսական խնդիրներից մէկը: Միանգամից նշեմ, որ Հայ Ազգային Գոնկրէսը, բացառութեամբ իր մասը կազմող մի կազմակերպութեան, կողմ է հայ-թուրքական յարաբերութիւնների շուտափոյթ կարգաւորմանը եւ պատրաստ է այդ հարցում աջակցել Հայաստանի իշխանութիւնների ձեռնարկած բոլոր դրական քայլերին: Մեր միակ առարկութիւնը վերաբերում է Յեղասպանութեան ուսումնասիրման նպատակով հայ եւ թուրք պատմաբանների յանձնաժողովի ստեղծմանը, քանի որ մեր հասցումը դա այլ բան, քան Հայոց Յեղասպանութեան ուրացում, չի նշանակում:

Իսկ այժմ տեսնենք, թէ ինչու է արտայայտուած յիշեալ տեղաշարժը: Այնպէս է, որ հայ եւ թուրք դիւանագետների գաղտնի փոխմների արդիւնքում ստեղծուել է մի աշխատանքային փաստաթուղթ, որն ընդգրկում է հետեւեալ կէտերը.

- Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիւանագիտական յարաբերութիւնների հաստատում.
- Պետական սահմանների փոխադարձ ճանաչում.
- Հայ-թրքական սահմանի բացում.
- Հայ եւ թուրք պատմաբաններից կազմուած յանձնաժողովի ստեղծում:

Հետագայում այդ փաստաթուղթը կոչուեց «ճանապարհային քարտէս», եւ բացայայտուեցին մի քանի այլ մանրամասներ: Ինչեւէ, բուն է, թէ մենք գործ ունենք միջպետական յարաբերութիւնների հաստատման մի լուրջ մտադրութեան հետ, մասնաւոր ինչպէս ունենալով, որ Թուրքիան, կարծես-թէ, հրաժարուել է հայ-թրքական յարաբերութիւնների կարգաւորումը Ղարաբաղի խնդրի լուծմանը պայմանաւորելու իր նախկին ապակառուցողական դիրքորոշումից: Սակայն առկա են երկու հանգամանքներ, որոնք մթագնում են այս տպաւորութիւնը: Հայկական կողմի համար ակնյայտօրէն որոշակի դժուարութիւն պիտի յարուցէր հայ եւ թուրք պատմաբանների յանձնաժողովի ստեղծման գաղափարը, եւ վերջ ի վերջոյ նրան յաջողուել է այն վերանայնել միջատաւարական յանձնաժողով: Բայց դա ընդամենը չէ փոխ խնդիրը քողարկելուն եւ հայ ժողովրդին հանդարտեցնելուն միտած մեղմասակցութիւն (եւֆիմիզ) է, քանի որ միջկառավարական յանձնաժողովում են եմբարդում է ստեղծել պատմաբանների ստորաբաժանում, ինչից հարցի էութիւնն ամենեւին չի փոխուում: Իսկ թուրքական կողմը չի կարող հաշուի չնստել ատրպէյ-ճանապահ հասարակութեան եւ սեփական ընդդիմութեան ճնշման հետ, ուստի ստիպուած կրկին վերադառնալու է իր նախկին դիրքորոշմանը: Հայաստանի եւ Թուրքիայի յարաբերութիւնները չեն կարգաւորուելու եւ հայ-թրքական սահմանը չի բացուելու, քանի դեռ Էւսկան յառաջընթաց չի արձանագրուել դարաբաղեան հակամարտութեան յուժման հարցում:

Այդ դէպքում արժ է առաջանում, ի՞նչն էր, ապա, բարձրացւած այդ ամբողջ աղմուկի իմաստը: Յատր, հարցի պատասխանը դառնահամ է լինելու հայկական կողմի համար: Ամբողջ խնդիրն այն է, որ Թուրքիան, Հայաստանի հետ յարաբերութիւնները կարգաւորելու ընդհանուր տրամադրութիւնները բացի, իր առջեւ նաեւ մի աւելի նուազագոյն եւ յստակ նպատակ էր դրել, այն է ամեն գնով կանխել Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահ Պարաք Օպամայի եւ Ամերիկեան գոնկրէսի կողմից Հայոց Յեղասպանութեան ճանաչում վտանգը: Թուրքիան լիովին հասաւ իր նպատակին, Հայաստանը մնաց ձեռնուճայն, իսկ Սփիւքը դարձեալ յուսախաբ եղաւ: Ֆոթալոյային դիւանագիտութեամբ սկսուած խաղի առաջին կէտն արարտեց 1-0 հաշուով յօգուտ Թուրքիայի:

Թուրքիայի ղեկավարները նախագահ Օպամայի առջեւ դրին հայ եւ թուրք դիւանագետների աշխատանքի արդիւնքում ծնուած վերոյիշեալ փաստաթուղթը եւ, ինչպէս սպասելի էր, նրան հեշտութեամբ համոզեցին, որ հայ-թրքական յարաբերութիւնների կարգաւորման բնագաւառում լրջագոյն գործընթաց է մեկնարկել: Օպաման, թէեւ գովելի ազմութեամբ, յայտարարեց, որ Հայոց Յեղասպանութեան գնահատման հարցում չի փոխել նախընտրական շրջանում արտայայտած իր տեսակէտը, սակայն պետական այրին վաշել կեցուածքով բացատրեց, որ մտադիր չէ խանգարել այդ դրական գործընթացին, հասկացնել տալով, որ Հայոց Յեղասպանութեան ճանաչման հարցն առայժմ հանում է Ամերիկայի Միացեալ Նահանգների օրակարգից:

Կարելի՞ է արդեօք, Թուրքիային եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներին մեղադրել երկերեսամիութեան մէջ: Ամենեւին ոչ: Թուրքիան, նախանձելի դիւանագիտական հնարամտութիւն դրբւորելով, այս հանգրուանում փայլուն կերպով լուծեց իր հետապնդած առաջնահերթ խնդիրը: Իսկ Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահը վարուեց այնպէս, ինչպէս նման իրավիճակում կը վարուէր ցանկացած պատասխանատու առաջնորդ: Եթէ այնուամենայնիւ, մեղադրանքի թիրախ փնտռելու անհրաժեշտութիւն կայ, ապա այդ թիրախը կարող են լինել միայն Հայաստանի վերջին տասնմէկ տարուա իշխանութիւնները յանձնիմ Ռուպերթ Քոչարեանի, Վարդան Օսկանեանի, Մերժ Սարգսեանի եւ Էտուարտ Նալպանտեանի, որոնք բառացիօրէն պղծեցին ցեղասպանութեան սուրբ գաղափարը, այն վերածելով քաղաքական աճուրդի ու սակարկութեան առարկայի: Եւ դա ոչ թէ պետական կամ ազգային վեհ նպատակների, այլ բացառապէս Սփիւքին հաճոյամալու եւ ներքաղաքական դիվիդենտներ ստանալու մանրախնդիր նկատառումով:

Այս կապակցութեամբ հետաքրքիր է հետեւի նրանց վարած միանգամայն սնանկ ու վնասակար քաղաքականութեան էլովիցիային.

- Քոչարեանի վարչակազմի առաջին գործը եղաւ դաւանական կամ հակազգային յայտարարել Թուրքիոյ հետ առանց նախապայմանների յարաբերութիւնների հաստատելու նախկին իշխանութիւնների որդեգրած քաղաքականութիւնը:

- Հայաստանի արտաքին քաղաքականութեան անկիւնաքարը հռչակուեց Յեղասպանութեան միջազգային ճանաչման պահանջը, որը որպէս հայ-թրքական յարաբերութիւնների կարգաւորման բանական հիմք, յոխորտանքով դրուեց նաեւ Թուրքիայի առջեւ:

- Երբ, երկար յամառելուց յետոյ, Քոչարեանը եւ Օսկանեանը ի վերջոյ համոզուեցին, որ այս ճանապարհը փակուղային է, նրանք վերադարձան իրենց կողմից ժամանակին դաւանական յայտարարուած Թուրքիոյ հետ առանց նախապայմանների յարաբերութիւններ հաստատելու սկզբունքին, սկսեալ բացայայտելով Հայաստանի բոլորիւնը եւ Թուրքիոյ հիմք տալով աւելի կոշտացնելու իր դիրքորոշումը:



- Թէ՛ այս օբյեկտի պատճառով, եւ թէ սեփական լեգիտիմութեան խնդրի լուծման նկատառումով, Մերժ Սարգսեանն ընկաւ մի աւելի վտանգաւոր ծայրայեղութեան գիրկը հայ-թրքական սահմանի բացման դիմաց անխեղաբար համաձայնելով ընդառաջել ցեղասպանութեան ուսումնասիրման հարցով հայ եւ թուրք պատմաբաններից կազմուած յանձնաժողով ստեղծելու վերաբերեալ Թուրքիայի վարչապետ Ռեճեպ Թայիպ Էրտողանի կողմից տարիներ առաջ արուած համարեալ մոռացուած առաջարկին:

Ոչ՝ մի այլ բան, քան քաղաքական խարխափումների, անհեռատե քայլերի եւ անպատասխանատու ձեռնարկների այս խաչատաակ շարքն է, ապա, որ յանգեցրեց նախապահ Օպամայի Թուրքիա կատարած այցի բեյաբ արդիւնքին: Ի հարկէ, չի կարելի պնդել, որ եթէ չլինէր հայ-թրքական յարաբերութիւնների կարգաւորման հարցում մեկնարկած վերոյիշեալ գործընթացը, Օպաման Ապրիլի 24-ի իր ուղերձում, արդէն Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահի հանգամանակները, անպայման կ'արտասանէր ցեղասպանութիւն բառը կամ ամերիկեան գոնկրէսը կը ճանաչէր Հայոց Յեղասպանութիւնը: Այսպիսի իրավիճակներ շատ են եղել, բայց երբեք այդ բանը տեղի չի ունեցել: Բայց ներկայ իրավիճակն Էսկանօրէն տարբերում է նախորդներից, քանի որ այս անգամ արդէն հարցի մերժման ֆորմալ պատրուակը Թուրքիայի հետ ամեն գնով, այդ բուն ցեղասպանութեան ուրացման գնով, մերժեմալու Մերժ Սարգսեանի ծախոր նախաձեռնութիւնն է: Այսպիսով, առանց որչա՞ք իսկ չափազանցութեան, հարկադրուած ենք արձանագրել. Մերժ Սարգսեանը յանուն սեփական իշխանութեան երկարաձգման, բառիս բուն իմաստով, ծախեց Յեղասպանութիւնը: Նրա յաջորդ քայլն, ամենակամ, լինելու է Ղարաբաղը ծախելը, ինչից յետոյ, բնականաբար, նա դառնալու է առաջին հայը, որը կ'արժանանայ Նուպէտեան մրցանակի:

Եւ մեղծ են արտայայտուած վտահաբար, Սարգսեանի վարքը շատ աւելի ամխնայ գնահատականների է արժանանալու Հայաստանի եւ մանաւոր Սփիւքի արձատական շրջանակներում: Արդարութիւնը պահանջում է, սակայն, կատարուածում մեղադրանքի որոշ բաժին հասցեագրել նաեւ Սփիւքի ազգային ջոջերին, ովքեր ոչ միայն երբեք Հայաստանի իշխանութիւններին չզգուշացրեցին ցեղասպանութեան ճանաչման հարցը պետականօրէն բարձրացնելու ձեռնարկի անխոհեմութեան ու վնասակարութեան մասին, այլեւ ընդհակառակը, ոգեւորութեամբ խրախուսեցին վերջիններիս անհրաժեշտութիւնը: «Ախրանքները» արդիւնքում ստանալով այն, ինչ ստացան: Աւելի քան քառասուն տարիների ընթացքում Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման նպատակով Սփիւքի ներդրած նախկանց ջանքերն ու դրամական միջոցները, այսպիսով, մէկ օրում ջուրը թափուեցին: Դժուար է պատկերացնել, թէ ինչպէս կարելի է շտկել վիճակը եւ դարձանել պատճառուած վնասը:

Այս ամենով հանդերձ, թէկուզ նման տխուր արդիւնքում արարուած հայ-թրքական յարաբերութիւնների կարգաւորման ներկայ գործընթացը բոլորովին գուրկ չէ դրական տարրերից: Մի կողմից Թուրքիոյ բնական շահագրգռութիւնը հայ-թրքական յարաբերութիւնների կարգաւորման հարցում, իսկ միւս կողմից այդ կարգաւորման պայմանաւորումը հայ-արարելիքական կարգաւորութիւններում ակնկալուող տեղաշարժով, որոշ հող է ստեղծում դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացի խթանման համար: Դրական պէտք է համարել նաեւ դէպքերի բերումով նախապահ Օպամայի ստանձնած բարոյական պատասխանատուութիւնը, ինչը նրա ղեկավարած երկրի առջեւ պարտաւորութիւն է դնում աւելի ակտիւօրէն ու անկողմնակալ կերպով ներգրաւուել ինչպէս հայ-թրքական յարաբերութիւնների, այնպէս էլ դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացում: Պարաք Օպաման խաւախտ է բառիս ամենադրական իմաստով: Իսկ յայտնի է, որ թէեւ աշխարհը տվորաբար կառավարում են պրագմատիկներն ու ցիբիլները, բայց քաղաքակրթութիւնն առաջ են մղում ժամանակ առ ժամանակ յայտնուող խաւախտները: Ընդ որում, խաւախտ ասելով, ես ամենեւին նկատի չունեմ իդիոլոգներին, այլ բարոյականութեան, ազմութեան եւ արդարութեան հարցերում կայուն սկզբունքներ ունեցող հազուադէպ պետական անձանց: